# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-2026/16-15-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Primo DR MRI | Primo DR MRI | Medtronic | ԵՊԲՀ հիմնադրամում առկա և շահագործվող Medtronic ծրագրավորիչի համար նախատեսված և պարտադիր համատեղելի պեյսմեյկեր-դեֆիբրիլյատոր երկխոռչ: Օրիգինալ: Իմպլանտացվող երկխոռչանի կարդիովերտեր-դեֆիբրիլյատոր, ՄՌՏ համատեղելիությամբ, իրենից ներկայացնում է բազմածրագիր սրտաբանական սարքավորում, որն իրականացնում է հիվանդի սրտային ռիթմի մոնիտորինգ մեկ կամ երկխցիկ բրադիկարդիայի հաճախականական ադապտիվ ստիմուլյացիայի հաշվին; փորոքային և նախասրտային տախիառիթմիաների բուժում: ՄՌՏ համատեղելիությունը – 1,5 Տ և 3 Տ, սկանավորման գոտիների սահմանափակում չկա (սրտի հատվածը ներառյալ), պացիենտի հասակի սահմանափակում չկա, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ՄՌՏ սկանավորման միջամտության տևողության սահմանափակում չկա, ՄՌՏ-համատեղելի էլեկտրոդներով իմպլանտավորման պայմանով, ինչպես նաև հետազոտման անցկացման արտադրողի կողմից պահանջվող պայմանների հետևելու պայմանով: Կոննեկտորների տիպը` IS-1, DF4/ DF1, զանգվածը` ոչ ավել, քան 78 գ.; ծավալը` ոչ ավել, քան` 34 սմ3; Չափսերը` ոչ ավել, քան 68մմ x 51մմ x 13մմ: Շահագործման ժամկետը ոչ պակաս, քան 9 տարի (հաշվի առնելով առավելագույն հզորությամբ կիսամյակային ցնցումները, ստիմուլյացիայի ռեժիմը` AAI<=>DDD աջ նախասրտի 50% ստիմուլյացիայով, ամպլիտուդ 2,5 Վ, դիմադրողականություն 600 Օմ, եռամսյակային տվյալների փոխանցումներ հեռակառավարման միջոցով); Մարդու հյուսվածքների կոնտակտավորող մատերիալներ` տիտան, պոլիուրեթան, սիլիկոնի կաուչուկ: Ռենտգեն կոնտրաստային իդենտիֆիկատոր`PFZ:Կորպուսի ձևը` ֆիզիոլոգիական ուրվագծման: Մարտկոցը` Հիբրիդային CFx լիթիում/արծաթ-վանադիումի օքսիդ Մատակարարվող էներգիայի առավելագույնը` 36Ջ. Կուտակված էներգիայի առավելագույնը` 42Ջ. Շահագործման սկզբում լիցքավորման ստանդարտ ժամանակ` ոչ ավել, քան` 8,3վրկ. Փոխելու համար խորհուրդ տրվող ժամկետին հասնելու պահի ստանդարտ ժամանակը` (RRT) ոչ ավել, քան`12,3 վրկ:Մարտկոցի շահագործման երկարաձգված ժամկետը (PSP)` դա RRT-ի (փոփոխման խորհուրդ տրվող ժամկետ) և EOS-ի (շահագործման ժամկետի ավարտ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | միջև ժամանակահատվածն է: PSP տևողությունը սահմանվում է 3 ամիս ժամկետով հետևյալ պայմանների կատարման պայմանով՝ DDD-ի 100% ստիմուլյացիա 60 ր. -1 հաճախականությամբ, նախասրտերի և աջ փորոքի ստիմուլյացիայի ամպլիտուդան՝ 2,5Վ, իմպուլսի լայնությունը՝ 0,4մվ; ստիմուլյացիայի ծանրաբեռնվածությունը՝ 600 Օմ, ինչպես նաև 6 ամբողջական լիցք: Եթե սարքը գերազանցում է նշված պայմանները, EOS-ի մասին ծանուցումը կարող է հայտնվել նախքան եռամսյա ժամկետի ավարտը: Ֆունկցիաների առկայությունը՝ Ստիմուլյացիայի ռեժիմների միջև ավտոմատ փոփոխում (AAI(R) <-> DDD(R)); Զգայունության ավտոմատ կարգավորում; Ֆիզիկական ակտիվությանն ի պատասխան ստիմուլյացիայի հաճախականության ադապտացում; ՍԿՀ հանդեպ AV ինտերվալի ադապտացում; Ավտո PVARP (նախասրտերի հետփորոքային ռեֆրակտերային ժամանակահատված) ՍԿՀ կամ ստիմուլյացիաների հաճախականությանը ադապտացմամբ, կարդիոստիմուլյատորի առաջացրած հաճախասրտության կանխման նպատակով; Ոչ մրցակցային նախասրտային ստիմուլյացիա (NCAP) նախասրտային էքստրասիստոլայից հետո; Միջամտություն կարդիոստիմուլյատորի առաջացրած հաճախասրտության ժամանակ; Ի պատասխան փորոքային էքստրասիստոլային (PVC); Կանխիչ փորոքային ստիմուլյացիա (VSP) խաչաձև խանգարումների ժամանակ; աշխատանքային ռեժիմների DDDR-ից DDI չհետևվող ռեժիմի փոփոխումը, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | նախախասրտային տախիարիթմիայի առկայության դեպքում կանխում է փորոքների արագ ստիմուլյացիան վերփորոքային հաճախասրտությունների ժամանակ; Նախասրտերի ֆիբրիլյացիայի անցկացման փորոքների վրա պատասխանը նպաստում է նախասրտերի ֆիբրիլյացիայի էպիզոդների ժամանակ կանոնավոր փորոքային հաճախականության պահպանմանը; Նախասրտային էքստրասիստոլայից հետո նախասրտային հաճախականության կայունացում; Նախասրտերի նախընտրելի ստիմուլյացիա (APP) նախասրտային առիթմիաների և ՆՖ կանխարգելման նպատակով; Փորոքի կրճատումների հաճախականության (VRS) կայունացում փորոքային էքստրասիստոլայից հետո: Օժտված է փորոքների խթանումը կառավարող էքսկլյուզիվ ռեժիմով (MVP), ATP : Կարող է հայտնաբերել VT/VF: Մարտկոցի տիպը` լիթիում-արծաթ-վանադիումի օքսիդ: Դեֆիբրիլացիայի և կարդիովերսիայի էներգիան ` 0,4 -35 Ջ: Խթանման ռեժիմները` DDDR և DDD, DDIR և DDI, DOOVVIR և VVI,VOO, AAIR և AAI,AOO,MVP,ODO: Հավաքածուն իր մեջ ներառում է նաև երկու էլեկտրոդ և երկու ինտրոդյուսեր; Կախված վիրահատության առանձնակատկությունից էլեկտրոդները կարող են լինել պասիվ կամ ակտիվ ֆիկսացիայի: Պեյսմեյկեր-դեֆիբրիլյատորի տեխնիկական և երաշխիքային սպասարկում` հիվանդին իմպլանտացվելուց հետո ոչ պակաս, քան 9 տարի ժամկետում: Մատակարարը պարտավոր է պայմանագրի կատարման փուլում ներկայացնել փաստաթղթային հավաստում, որ ստորև |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Интермед Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-15-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | - | - | - | որևէ կետի ի հայտ գալու դեպքում կարող է ապահովել տվյալ կետի իրականացումը և սեփական միջոցների հաշվին իրականացնել հետևյալ գործառույթները, ընդ որում Պատվիրատուն իրավունք ունի ստուգել ներկայացված տեղեկության իսկությունը հենց արտադրողի հետ: 1.յուրաքանչյուր խոտանված ապրանքի կամ աշխատանքային ռեժիմի խախտման դեպքում Պատվիրատուից տրամադրված տեղեկությունը փոխանցել Արտադրողին, ստանալ այդ դեպքի համար արտադրողի բացատրությունը և ներկայացնել Պատվիրատուին: Արտադրողը պարտավորվում է նաև իրականացնել առցանց ախտորոշում: Այս ամենն իրականացվելու է սարքը հիվանդին իմպլանտացվելուց հետո ոչ պակաս, քան 9 տարի ժամկետում: 2.արտադրողի կողմից ապրանքի որևէ խմբաքանակի (Պատվիրատուին մատակարարած) հետ կանչի դեպքում այդ տեղեկությունը Պատվիրատուին փոխանցել և հետ կանչված ապրանքները փոխարինել նորով: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA կամ համարժեք որակի վկայականի առկայությունը պարտադիր է: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ի առկայություն:Պարտադիր պայման է հանդիսանում՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝1. ապրանքը արտադրողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ներկայացվող ավտարիզացիոն նամակ (երաշխիքային-լիազոր նամակ): Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ 1. ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ծագման սերտիֆիկատ և համապատասխանության հավաստագիր: Երաշխիքային պայմանները չեն ներառում այն դեպքերը, երբ սարքը վնասվել է բժշկի իմպլանտացման կանոնների խախտման պատճառով: |